

**«ԼԻՄԻՏԻՆ ԱՍԵԹ ՄԵՆԵՉՄԵՆԹ» ՓԲԸ-Ի  
«ԼԻՄԻՏԻՆ ՓՐԱՅՄ ՖՈՆԴ»  
ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ, ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ, ԲԱՑ,  
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՌԻՍԿՈՎ  
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴ**

Ֆինանսական հաշվետվություններ

*2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար  
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

---

Անկախ աուդիտորական եզրակացություն

### Ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն .....	1
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն .....	2
Չուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն .....	3
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն .....	4

### Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Հաշվետու ընկերություն .....	5
2. Պատրաստման հիմունքներ .....	5
3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն .....	6
4. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ .....	12
5. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ .....	13
6. Տրամադրված փոխառություններ .....	13
7. Այլ պարտավորություններ .....	13
8. Փայտերերին վերագրելի զուտ ակտիվներ .....	14
9. Չուտ առևտրային եկամուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից .....	14
10. Միջնորդավճարների գծով ծախսեր .....	15
11. Կառավարման վճարներ .....	15
12. Ռիսկերի կառավարում .....	15
13. Գործարքներ կառավարչի և այլ կապակցված կողմերի հետ .....	20
14. Ֆինանսական գործիքների իրական արժեքը .....	20
15. Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության վերլուծություն .....	21
16. Կապիտալ ռիսկի կառավարում .....	22
17. Պայմանական պարտավորություններ .....	22

## Անկախ աուդիտորական եզրակացություն

«Լիմիթեդ Փրայմ Ֆոնդ» փայտերերին

### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Լիմիթեդ Փրայմ Ֆոնդ» (այսուհետ՝ Ֆոնդ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ Եական տեղեկատվությունը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր Եական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ֆոնդի ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ՖՀՄՍ Հաշվապահական հաշվառման ստանդարտների:

### Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ֆոնդից՝ համաձայն Հաշվապահների Եթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀԵՄՍԽ) կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի Եթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության Միջազգային Ստանդարտները) (ՀԵՄՍԽ կանոնագիրք), որը կիրառելի է հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում կիրառելի Եթիկայի այն պահանջների, որոնք վերաբերում են հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտին: Մենք պահպանել ենք նաև Եթիկայի այլ պահանջները՝ համաձայն այս պահանջների և ՀԵՄՍԽ կանոնագրքի: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

### Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՀՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով Եական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ֆոնդի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ֆոնդը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

### **Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են Եական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի Եական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են Եական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այս ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- ▶ Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների Եական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած Եական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով Եական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ▶ Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ֆոնդի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- ▶ Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:



Վստահորեն  
կերտելով ապագան

- ▶ Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Ֆոնդի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Ֆոնդի գործունեության անընդհատության դադարեցմանը:
- ▶ Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ  
ՀՀ, ք. Երևան

Գլխավոր տնօրեն  
Աուդիտի բաժնի գործընկեր



Էրիկ Չայրապետյան

Պատասխանատու աուդիտոր  
2026թ. ապրիլի 29

Աննա Չայյան

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար ՀՀ դրամ	Ծան.	2025թ. դեկտեմբերի 31	2024թ. դեկտեմբերի 31
<b>Ակտիվներ</b>			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4	5,585,816	3,412,900
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	5	2,530,880	1,520,006
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		12,388	8,059
Տրամադրված փոխառություններ	6	230,948	40,103
<b>Ընդամենը ակտիվներ</b>		<b>8,360,032</b>	<b>4,981,068</b>
<b>Պարտավորություններ</b>			
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	5	701,989	401,880
Կառավարման վճարների գծով կրեդիտորական պարտքեր		280,111	28,701
Ընթացիկ հարկային պարտավորություններ		428	282
Այլ պարտավորություններ	7	2,201	24,081
<b>Ընդամենը պարտավորությունները (բացառությամբ փայտերերին վերագրելի զուտ ակտիվների)</b>		<b>984,729</b>	<b>454,944</b>
<b>Փայտերերին վերագրելի զուտ ակտիվներ</b>	8	<b>7,375,303</b>	<b>4,526,124</b>
<b>Ընդամենը պարտավորություններ և փայտերերին վերագրելի զուտ ակտիվներ</b>		<b>8,360,032</b>	<b>4,981,068</b>

**ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ և ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
 ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ	Տան.	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Չուտ առևտրային եկամուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից	9	1,940,204	640,317
Շահաբաժիններից եկամուտ		16,376	23,434
Տոկոսային եկամուտ		138,482	92,253
Չուտ վնաս արտարժույթային գործառնություններից		(552)	(4,275)
Չուտ օգուտ/(վնաս) արտարժույթի փոխարժեքի վերազնահատումից		(86,923)	20,743
Կառավարման վճարներ	11	(709,536)	(257,786)
Միջնորդավճարների գծով ծախսեր	10	(74,022)	(30,566)
<b>Չուտ շահույթ նախքան հարկումը</b>		<b>1,224,029</b>	<b>484,120</b>
Շահութահարկի գծով ծախս		(630)	(317)
<b>Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ հաշվետու ժամանակաշրջանի համար</b>		<b>1,223,399</b>	<b>483,803</b>
<b>Փայատերերին վերագրելի զուտ ակտիվների աճ</b>		<b>1,223,399</b>	<b>483,803</b>

Վերոնիկա Սարգսյան

Գործադիր տնօրեն

Արմեն Ազիզյան

ՍթեփԱփ ՍՊԸ ներկայացուցիչ

2026թ. ապրիլի 29

**ՉՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

<i>Հազար ՀՀ դրամ</i>	<b>Փայատերերին վերագրելի զուտ ակտիվներ</b>
<b>Մնացորդը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ</b>	2,072,535
<b>Փայերի թողարկում և մարում</b>	
Փայերի թողարկում	2,130,437
Փայերի մարում	(160,651)
<b>Փայերով գործարքներից զուտ աճ</b>	1,969,786
<b>Տարվա համար փայատերերին վերագրելի զուտ ակտիվների աճ</b>	483,803
<b>Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>4,526,124</b>
<b>Փայերի թողարկում և մարում</b>	
Փայերի թողարկում	1,896,288
Փայերի մարում	(270,508)
<b>Փայերով գործարքներից զուտ աճ</b>	1,625,780
<b>Տարվա համար փայատերերին վերագրելի զուտ ակտիվների աճ</b>	1,223,399
<b>Մնացորդը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>7,375,303</b>

**ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

	<b>2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի</b>	<b>2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի</b>
<i>Հազար ՀՀ դրամ</i>		
<b>Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից</b>		
Ստացված տոկոսներ	131,045	88,355
Ստացված շահաբաժիններ	17,454	27,307
Վճարված միջնորդավճարներ	(36,532)	(3,238)
Վճարված կառավարման վճարներ	(456,731)	(353,100)
Ստացված ծառայությունների դիմաց վճարումներ	(37,369)	(27,332)
Արժույթի փոխարկման գծով վճարումներ	(216)	(4,275)
Չուտ դրամական միջոցների հոսքեր շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից	1,229,439	306,167
Վճարված շահութահարկ	(485)	(93)
<b>Չուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից</b>	<b>846,605</b>	<b>33,791</b>
<b>Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից</b>		
Տրամադրված փոխառություններից ելքեր	(191,281)	-
<b>Չուտ դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից</b>	<b>(191,281)</b>	<b>-</b>
<b>Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից</b>		
Տրամադրված փոխառություններից ելքեր	-	(37,921)
Փայերի մարումից ելքեր	(229,832)	(138,651)
Փայերի թողարկումից մուտքեր	1,867,509	2,130,437
<b>Չուտ դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից</b>	<b>1,637,677</b>	<b>1,953,865</b>
<b>Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ</b>	<b>2,293,001</b>	<b>1,987,656</b>
<b>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ</b>	<b>3,412,900</b>	<b>1,402,565</b>
Չուտ փոխարժեքային տարբերության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(120,085)	22,679
<b>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ</b>	<b>5,585,816</b>	<b>3,412,900</b>

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

### 1. ՀԱՇՎԵՏՈՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

#### ա) Հիմնական գործունեություն

«Լիմիթես ասեթ մենեջմենթ» ՓԲԸ-ի «Լիմիթես Փրայմ» հրապարակային, պայմանագրային, բաց, լրացուցիչ ռիսկով ներդրումային ֆոնդը («Լիմիթես Փրայմ» ֆոնդ կամ «Ֆոնդ») հրապարակային, պայմանագրային, բաց, լրացուցիչ ռիսկով ներդրումային ֆոնդ է: Ֆոնդը հիմնադրվել է ՀՀ օրենսդրությանը համաձայն: Ֆոնդը գրանցվել է ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) No. 106-A որոշմամբ 2023թ. հուլիսի 11-ին:

Ֆոնդի ներդրումային նպատակը միավոր ռիսկի դիմաց հավելյալ եկամտի ստացումն է: Ֆոնդի ակտիվները առավելապես ներդրվում են միջազգային կարգավորվող շուկաներում (որպես հիմնական շուկաներ դիտարկվում են Նյու Յորքի ֆոնդային բորսան (New York Stock Exchange) և Նասդաքը (Nasdaq Stock Exchange)) ցուցակված/չցուցակված իրացվելի արժեթղթերում՝ բաժնետոմսերում, պարտատոմսերում, բորսայում շրջանառվող ֆոնդերում (Exchange Traded Funds, ETF) և ածանցյալ գործիքներում:

Ֆոնդի ներդրումային գործունեությունը կառավարվում է «Լիմիթես ասեթ մենեջմենթ» ՓԲԸ-ի կողմից (Կառավարիչ), որը գրանցվել է ՀՀ ԿԲ-ում (2022թ. դեկտեմբերի 27-ին տրված լիցենզիա 0007) ՀՀ օրենսդրության համաձայն:

Ֆոնդի կառավարչի գրանցման հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Քեռու փողոց 1/3, հարկ 5:

#### բ) Հայաստանի գործարար միջավայրը

Ֆոնդը իր հիմնական գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, այն ենթակա է Հայաստանի տնտեսական և ֆինանսական շուկաների ազդեցությանը, որոնք հանդիսանում են զարգացող շուկաներ: Իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, որոնք այլ իրավական և հարկայնություններին խոչընդոտների հետ միասին նպաստում են Հայաստանում գործող կազմակերպությունների առջև ծառայած մարտահրավերներին: Բացի այդ, 2020թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղում զինված հակամարտության բռնկումը, դրան հաջորդած Լեռնային Ղարաբաղի վիճելի տարածքների շուրջ հրադադարի պայմանավորվածությունը և, հետագայում, Հայաստանի Հանրապետության տարածքում հակամարտության սրումը ավելի են մեծացրել բիզնես միջավայրի անորոշությունը:

Ուկրաինայի պատերազմի արդյունքում շատ առաջատար երկրներ և տնտեսական միություններ խիստ տնտեսական պատժամիջոցներ են սահմանել Ռուսաստանի և Բելառուսի նկատմամբ՝ ներառյալ ռուսական բանկերի, այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ: Պատերազմի սկզբից ի վեր նկատվել է ռուսական ռուբլու՝ արտարժույթի նկատմամբ զգալի անկայունություն, ինչպես նաև՝ Ռուսաստանի արժեթղթերի շուկայում և այլ շուկաներում ցուցակված ռուսական ընկերությունների արժեքի զգալի անկում: Պատերազմի հետևանքով եղավ ոչ ռեզիդենտների ներհոսք և մի շարք ընկերությունների տեղափոխում (հատկապես Ռուսաստանից) Հայաստան՝ ինչը դրական նշանակալի դերակատարություն ունեցավ, ընդհանուր առմամբ, Հայաստանի տնտեսության խթանման և մասնավորապես, ներդրումների և ակտիվների կառավարման գործընթացների խթանման հարցում: Քանի որ պատերազմը դեռ շարունակվում է, հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել այն ազդեցությունը, որը կարող է ունենալ Ֆոնդի գործունեության վրա, քանի որ անորոշություն կա ընդհանուր տնտեսության վրա ազդեցության աստիճանի վերաբերյալ:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ֆոնդի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության վերաբերյալ ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

### 2. ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

#### 2.1 Համապատասխանության մասին հայտարարություն

Ֆոնդի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՖՀՄՍ Հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն՝ թողարկված Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդի (ՀՀՄՄՏ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Ֆոնդը իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

## **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)**

### **2. ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ (շարունակություն)**

#### **2.2 Գործառնական և ներկայացման արժույթ**

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («ՀՀ դրամ»), որը հանդիսանում է Ֆոնդի գործառնական արժույթը և այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Այս ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հազար ՀՀ դրամով, և բոլոր արժեքները կլորացված են հազար դրամի չափով, եթե այլ բան նշված չէ:

#### **2.3 Չափման հիմունքներ**

Ֆոնդը պատրաստում է իր ֆինանսական հաշվետվությունները սկզբնական արժեքի հիման վրա, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք չափվում են իրական արժեքով: Չափման այլ հիմունքների կիրառման դեպքում Ֆոնդը բացահայտում է դրանք համապատասխան ծանոթագրություններում:

### **3. ՀԱՇՎԱԳԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

#### **3.1 Իրական արժեքի չափում**

Ֆոնդը չափում է ներդրումային արժեթղթերը իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Եթե ֆինանսական հաշվետվություններում ակտիվները կամ պարտավորությունները ճանաչվում են իրական արժեքով շարունակական հիմունքով, Ֆոնդը որոշում է, արդյոք հիերարխիայի մակարդակների միջև տեղի են ունեցել տեղաշարժեր՝ վերագնահատելով դասակարգումը (հիմնված ամենացածր մակարդակի երակետային տվյալների վրա, որոնք նշանակալի են ամբողջությամբ վերցված իրական արժեքի չափման համար) յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ավարտին:

#### **3.2 Արտարժույթով գործարքներ**

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Ֆոնդի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը:

	<b>2025թ. դեկտեմբերի 31</b>	<b>2024թ. դեկտեմբերի 31</b>
<b>ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար</b>	<b>381.36</b>	<b>396.56</b>

Դրամային հոդվածների հաշվարկից և փոխարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում՝ «Չուտ օգուտ/(վնաս) արտարժույթի փոխարժեքի վերագնահատումից» հոդվածում:

#### **3.3 Ֆինանսական գործիքներ**

##### *Ճանաչում և սպանանաչում*

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են սկզբնական ճանաչման ժամանակ որպես հետագայում ամորտիզացված արժեքով, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով և շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆոնդի՝ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները ներառում են դրամական միջոցները և դրանց համարժեքները:

## **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)**

### **3. ՀԱՇՎԱԳԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (շարունակություն)**

#### **3.3 Ֆինանսական գործիքներ (շարունակություն)**

*Ծահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ*

Այն ֆինանսական ակտիվները, որոնք չեն չափվում ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով, չափվում են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով: Մասնավորապես՝

- Բաժնային գործիքներում ներդրումները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե միայն Ֆոնդը չի դասակարգում բաժնային գործիքներում ներդրումները, որը չի պահվում վաճառքի կամ ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում առաջացած պայմանական վարձատրության համար, որպես՝ սկզբնական ճանաչման ժամանակ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող:
- Պարտքային գործիքները, որոնք չեն համապատասխանում ամորտիզացված արժեքի չափանիշին կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափման չափանիշին, դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող: Ինչպես նաև, պարտքային գործիքները, որոնք համապատասխանում են կամ ամորտիզացված արժեքով չափման համար նախատեսված չափանիշներին, կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափման համար նախատեսված չափանիշներին, կարող են դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող սկզբնական ճանաչման ժամանակ, եթե այսպիսի դասակարգումը վերացնում կամ զգալիորեն նվազեցնում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը («հաշվապահական հաշվառման անհամապատասխանություն»), ինչը կառաջանար ակտիվների կամ պարտավորությունների չափումից կամ տարբեր հիմունքներով այդ ակտիվների կամ պարտավորությունների մասով օգուտի կամ վնասի ճանաչումից:

Բաժնային արժեթղթերը, կորպորատիվ պարտքային արժեթղթերը և ֆոնդի փայերում ներդրումները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ծահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում՝ ներառյալ ողջ օգուտը կամ վնասը, որը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն դեպքում, երբ նրանք չեն հանդիսանում հեջային գործիքների մաս: Ծահույթում կամ վնասում ճանաչված զուտ օգուտը կամ վնասը ներառում է ֆինանսական ակտիվի մասով ցանկացած շահաբաժին կամ ստացված տոկոս և ներառվում է «Զուտ օգուտ/(վնաս) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքի փոփոխությունից» հոդվածում:

*Արտարժույթի փոխարկումից օգուտ և վնաս*

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը որոշվում է այդ արտարժույթով և փոխարկվում են սփոթ փոխարժեքով յուրաքանչյուր հաշվետու ժամականաշրջանի վերջի դրությամբ: Մասնավորապես՝

- Հեջային գործիքների մաս չհանդիսացող, ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների մասով արտարժույթային տարբերությունները ճանաչվում են շահույթ կամ վնասում «Զուտ օգուտ/(վնաս) արտարժույթի փոխարժեքի վերագնահատումից» հոդվածում;
- Հեջային գործիքների մաս չհանդիսացող, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների մասով արտարժույթային տարբերությունները ճանաչվում են շահույթի կամ վնասում «Զուտ առևտրային եկամուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից» հոդվածում:

## **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (Հարունակություն)**

### **3. ՀԱՇՎԱԳԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (Հարունակություն)**

#### **3.4 Արժեթղթերով գործարքներ և համապատասխան ներդրումային եկամուտ**

Տոկոսային եկամուտը հաշվառվում է հաշվեգրման սկզբունքով: Ծահարաժինների տեսքով եկամուտը հաշվառվում է նախորդ շահարաժնի ամսաթվին:

Ծահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից գուտ օգուտը ներառում է իրական արժեքի բոլոր իրացված և չիրացված փոփոխությունները, արտարժույթի փոխարժեքային տարբերությունները, նաև տոկոսների և շահարաժինների տեսքով եկամուտը, որը ճանաչվում է, երբ հաստատվում է Ֆոնդի՝ վճարումներ ստանալու իրավունքը:

#### **3.5 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են հանդիսանում բանկերում ընթացիկ հաշիվները:

#### **3.6 Զուտ ակտիվներ**

Թողարկված փայերի համար ստացված գումարները հաշվառվում են գուտ ակտիվների փոփոխությունների մասին հաշվետվության «Փայատերերին վերագրելի գուտ ակտիվներ» հոդվածում:

Փայատերերին վերագրելի գուտ ակտիվների աճը ներառում է ընթացիկ տարվա շահույթը:

#### **3.7 Ծահույթահարկ**

Ընթացիկ տարվա շահույթահարկը հաշվարկվում է Ֆոնդի գուտ ակտիվների 0.01% չափով:

#### **3.8 Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ**

Ֆոնդն առաջին անգամ կիրառել է որոշ ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք ուժի մեջ են մտնում 2025թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար (եթե այլ բան նշված չէ): Ֆոնդը վաղաժամ չի ընդունել այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որոնք իրապարակվել, սակայն դեռևս ուժի մեջ չեն մտել:

#### **Փոխանակելիության բացակայություն - ՀՀՄՄ 21 ստանդարտի փոփոխություններ**

2025թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար Փոխանակելիության բացակայություն - ՀՀՄՄ 21 Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ ստանդարտի փոփոխությունները հստակեցնում են, թե ինչպես պետք է կազմակերպությունը գնահատի՝ արդյոք արտարժույթը փոխանակելի է, և ինչպես պետք է որոշի սփոթ փոխարժեքը փոխանակելիության բացակայության դեպքում: Փոփոխությունները նաև պահանջում են տեղեկատվության բացահայտում, որը թույլ կտա ֆինանսական հաշվետվությունների օգտագործողներին հասկանալ, թե ինչպես է մեկ այլ արժույթով փոխանակման ոչ ենթակա արժույթը ազդում կամ ակնկալվում է, որ կազդի կազմակերպության ֆինանսական արդյունքների, ֆինանսական վիճակի և դրամական հոսքերի վրա:

Այս փոփոխությունը նշանակալի ազդեցություն չի ունեցել Ֆոնդի ֆինանսական հաշվետվությունների վրա:

#### **Հրապարակված, սակայն դեռևս չգործող ստանդարտներ**

Նոր և փոփոխված ստանդարտներն ու մեկնաբանությունները, որոնք իրապարակվել են, բայց դեռևս ուժի մեջ չեն մտել, մինչև Ֆոնդի կողմից ֆինանսական հաշվետվությունների թողարկումը, ներկայացվում են ստորև: Ֆոնդը մտադիր է ընդունել այս նոր և փոփոխված ստանդարտները և մեկնաբանությունները, կիրառելիության դեպքում, երբ ուժի մեջ մտնեն:

## **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)**

### **3. ՀԱՇՎԱԳԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (շարունակություն)**

#### **3.8. Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)**

**Հրապարակված, սակայն դեռևս չգործող ստանդարտներ (շարունակություն)**

#### ***ՖՀՄՍ 18 Ֆինանսական հաշվետվություններում ներկայացում և բացահայտում***

2024 թվականի ապրիլին ՀՀՄՍԻ-ն հրապարակել է ՖՀՄՍ 18 ստանդարտը, որը փոխարինում է ՀՀՄՍ 1 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում ստանդարտին: ՖՀՄՍ 18-ը նոր պահանջներ է ներկայացնում շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ներկայացման գծով՝ ներառյալ որոշ հանրագումարներ և միջանկյալ հանրագումարներ: Ավելին, կազմակերպությունները պարտավոր են շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում բոլոր եկամուտներն ու ծախսերը դասակարգել ըստ հինգ կատեգորիաների՝ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, շահութահարկ, ընդհատված գործառնություններ, որոնցից առաջին երեք կատեգորիաները նոր են:

Ստանդարտը պահանջում է նաև նոր, դեկավարության կողմից սահմանված կատարողականի չափորոշիչների, եկամուտների և ծախսերի միջանկյալ հանրագումարների բացահայտում և ներառում է նաև ֆինանսական տեղեկատվության համախմբման և տարանջատման նոր պահանջներ՝ հիմնված հիմնական ֆինանսական հաշվետվությունների և ծանոթագրությունների սահմանած «դերերի» վրա:

Բացի այդ, ՀՀՄՍ 7 Դրամական հոսքերի մասին հաշվետվություն ստանդարտում կատարվել են նեղ շրջանակի փոփոխություններ, որոնք ներառում են գործառնություններից դրամական հոսքերի՝ անուղղակի մեթոդով որոշելու մեկնարկային կետի փոփոխություն՝ «շահույթ կամ վնաս»-ից դեպի «գործառնական շահույթ կամ վնաս» և շահաբաժիններից ու տոկոսագումարներից դրամական հոսքերի դասակարգման ընտրության հնարավորության վերացում: Ավելին, որոշակի համապատասխան փոփոխություններ են կատարվել մի քանի այլ ստանդարտներում:

ՖՀՄՍ 18 և այլ ստանդարտների փոփոխությունները ուժի մեջ են մտնելու 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղ ընդունումը թույլատրվում է, սակայն անհրաժեշտ է բացահայտում: ՖՀՄՍ 18 ստանդարտը կիրառվելու է հետահայաց:

Ներկայումս Ֆոնդը աշխատում է բացահայտել այն բոլոր ազդեցությունները, որոնք փոփոխությունները կունենան հիմնական ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների վրա:

#### ***ՖՀՄՍ 19 Դուստր կազմակերպություններ՝ առանց հրապարակային հաշվետվողականության: Բացահայտումներ***

2024 թվականի մայիսին ՀՀՄՍԻ-ն հրապարակել է ՖՀՄՍ 19 ստանդարտը, որը հնարավորություն է տալիս իրավասու կազմակերպություններին ընտրություն կատարել՝ կիրառելու նվազեցված պահանջները բացահայտումների նկատմամբ՝ միաժամանակ կիրառելով հաշվապահական հաշվառման այլ ՖՀՄՍ ստանդարտների ճանաչման, չափման և ներկայացման պահանջները: Իրավասու լինելու համար, կազմակերպությունը պետք է հանդիսանա դուստր կազմակերպություն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, ինչպես սահմանված է ՖՀՄՍ 10 ստանդարտում, չի կարող ունենալ հրապարակային հաշվետվողականություն, և պետք է ունենա մայր կազմակերպություն (վերջնական կամ միջանկյալ), որը պատրաստում է հանրության օգտագործման համար հասանելի համախմբված ֆինանսական հաշվետվություններ, որոնք համապատասխանում են ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներին: ՖՀՄՍ 19 ստանդարտը ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար, իսկ վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է:

Քանի որ Ֆոնդի պարտքային արժեթղթերը հրապարակայնորեն շրջանառվում են, սպա Ֆոնդը իրավասու չէ կիրառել ՖՀՄՍ 19 ստանդարտը:

## **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)**

### **3. ՀԱՇՎԱԳԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (շարունակություն)**

#### **3.8. Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)**

Հրապարակված, սակայն դեռևս չգործող ստանդարտներ (շարունակություն)

#### **Փոփոխություններ ֆինանսական գործիքների դասակարգման և չափման մեջ. Փոփոխություններ ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 ստանդարտներում**

2024 թվականի մայիսին ՀՀՄՍԻ-ն հրապարակել է ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 ստանդարտների փոփոխությունները - Փոփոխություններ ֆինանսական գործիքների դասակարգման և չափման մեջ (այսուհետ՝ Փոփոխություններ): Փոփոխությունները ներառում են՝

- Պարզաբանում, որ ֆինանսական պարտավորությունն ապահանջվում է «մարման ամսաթվին» և սահմանում է հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության հնարավորություն (եթե բավարարված են որոշակի պայմաններ) էլեկտրոնային վճարային համակարգով մարված ֆինանսական պարտավորությունները մինչև «մարման ամսաթիվը» ապահանջելու համար;
- Լրացուցիչ ուղեցույց այն մասին, թե ինչպես պետք է գնահատվեն պայմանագրային դրամական միջոցների հոսքերը բնապահպանական, սոցիալական և կորպորատիվ կառավարման և նմանատիպ հատկանիշներով ֆինանսական ակտիվների համար;
- Պարզաբանումներ այն մասին, թե որոնք են «առանց ռեգրեսի հատկանիշները» և որոնք են պայմանագրորեն կապակցված գործիքների բնութագրերը;
- Պայմանական հատկանիշներով ֆինանսական գործիքների բացահայտման և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով դասակարգված բաժնային գործիքների բացահայտման լրացուցիչ պահանջների սահմանում:

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Վաղ կիրառումը թույլատրվում է միայն ֆինանսական ակտիվների դասակարգման և համապատասխան բացահայտումների համար: Ֆոնդը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների հնարավոր ազդեցությունը իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

#### **ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների տարեկան բարելավումներ – Բաժին 11**

2024 թվականի հուլիսին ՀՀՄՍԻ-ն հրապարակել է ինը նեղ շրջանակի փոփոխություններ որպես ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների պարբերական թարմացման մաս: Փոփոխությունները ներառում են պարզաբանումներ, պարզեցումներ, ճշգրտումներ կամ փոփոխություններ ՖՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների առաջին անգամ որդեգրումը», ՖՀՄՍ 7 «Ֆինանսական գործիքներ. Բացահայտումներ» և ՖՀՄՍ 7 ստանդարտի կիրառման վերաբերյալ կից ուղեցույց, ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ», ՖՀՄՍ 10 «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ», ՀՀՄՍ 7 «Դրամական հոսքերի մասին հաշվետվություն» ստանդարտների համապատասխանությունը բարելավելու համար:

Փոփոխությունները ուժի մեջ են մտնելու 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղ կիրառումը թույլատրվում է, սակայն անհրաժեշտ է բացահայտում:

Ֆոնդը չի ակնկալում, որ տվյալ փոփոխությունները նշանակալի ազդեցություն կունենան ֆինանսական հաշվետվությունների վրա:

## **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)**

### **3. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (շարունակություն)**

#### **3.8. Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)**

Հրապարակված, սակայն դեռևս չգործող ստանդարտներ (շարունակություն)

#### ***Բնական պայմաններից կախված էլեկտրաէներգիայի վերաբերյալ պայմանագրեր – Փոփոխություններ ՖՀՄՄ 9-ում և ՖՀՄՄ 7-ում***

2024 թվականի դեկտեմբերին ՀՀՄՄԻՄ -ն հրապարակել է ՖՀՄՄ 9 և ՖՀՄՄ 7 ստանդարտների փոփոխությունները – *Բնական պայմաններից կախված էլեկտրաէներգիայի վերաբերյալ պայմանագրեր*: Փոփոխությունները կիրառվում են միայն այն պայմանագրերի նկատմամբ, որոնք վերաբերում են բնական պայմաններից կախված էլեկտրաէներգիային:

Փոփոխությունները՝

- Պարզաբանում են «սեփական օգտագործման» պահանջների կիրառումը բնական պայմաններից կախված էլեկտրաէներգիայի վերաբերյալ պայմանագրերի համար;
- Փոփոխում են դրամական հոսքերի հեջավորման փոխհարաբերություններում հեջավորված հոդվածների նախորդչման պահանջները բնությունից կախված էլեկտրաէներգիայի վերաբերյալ պայմանագրերի համար;
- Ավելացնում են բացահայտման նոր պահանջներ՝ հնարավորություն տալով ներդրողներին հասկանալ այսպիսի պայմանագրերի ազդեցությունը ընկերության ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի վրա:

Փոփոխությունները ուժի մեջ են մտնելու 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղ ընդունումը թույլատրվում է, սակայն անհրաժեշտ է բացահայտում: Սեփական օգտագործման գծով բացառության վերաբերյալ փոփոխությունները կիրառվում են հետընթաց, իսկ հեջի հաշվառման վերաբերյալ փոփոխությունները պետք է կիրառվեն առաջընթաց հեջավորման նոր փոխհարաբերությունների նկատմամբ՝ նախորդված սկզբնական կիրառման ամսաթվից: Ինչպես նաև, ՖՀՄՄ 7-ի բացահայտման գծով փոփոխությունները պետք է կիրառվեն ՖՀՄՄ 9-ի գծով փոփոխությունների հետ մեկտեղ: Եթե կազմակերպությունը չի վերահաշվարկում համեմատական տեղեկատվությունը, այն չի կարող ներկայացնել համեմատական տեղեկատվության բացահայտումներ:

Փոնդը չի ակնկալում, որ տվյալ փոփոխությունները նշանակալի ազդեցություն կունենան ֆինանսական հաշվետվությունների վրա:

